ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.12.2018թ. N 408/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ալոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Դանիելյանը, Տ.Կոտոլիկյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Աճուրդի ամփոփման արդյունքների մասին
1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Ալոյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.
1. «Յուքոմ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Տերյան-19, բն.4)
2. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն (ք.Երևան, Արգիշտիի փող., 4/1 շենք)

2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ որը կազմված է հրավերի պայմաններին համապատասխան:
2. «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ սակայն «Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Եսայանի կողմից 01.06.2018թ. տրված լիազորագրով Կարեն Ասատուրյանին տրված չէ «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգերի գնման հրավերով նախատեսված հայտով ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու և վավերացնելու համար:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ		Պլանավորված առավելագույն գինը ՀՀ դրամ
		«Յուքոմ» ՍՊԸ-ի	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ	
1	Հեռախոսակապի ծառայություններ	16 500 000	19 800 000	**27 480 000**

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը գնահատել բավարար:
2. «Յուքոմ» ՍՊԸ-ին կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը գնահատել անբավարար:
3. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգի 7.9 կետի՝ եթե արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սահմանված ժամկետում մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:
4. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/5 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Յուքոմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
5. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ալոյան

Անդամներ՝ Ա.Դանիելյան

Տ.Կոտոլիկյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան